



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԱՂԶՔ, ԱԳԱՐԱԿ, ՈՒՋԱՆ ԵՎ ՈՍԿԵՎԱԶ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ԱՐԱԳԱԾՈՆՆ, 2015

Վերլուծություն իրականացնող կառույց.....	3
Համայնքներ.....	4
Ու կ ե վ ա գ	4
Ու ջ ա ն	4
Ա գ ա ր ա կ	5
Ա դ ձ ֆ	5
Համայնքների մրցակցային առավելությունները	6
Տնտեսության ճյուղերի վերլուծություն	7
Ելակի մշակում	8
Ա յ գ ե գ ո թ ծ ու թ յ ու ն	11
Այգեգործության հիմնական ցուցանիշները.....	12
«Այգեգործություն – պտղի շարունակական վերամշակում» արժեշղթան համայնքներում	13
Ն ա թ ա ձ ե ո ն ու թ յ ու ն ն ե ր ա յ գ ե գ ո թ ծ ու թ յ ա ն ու ն ր տ ու մ	15
Ա յ լ ճ յ ու ղ ե ր	17
Խ ա դ ո ղ ա գ ո թ ծ ու թ յ ու ն	17
Անասնապահություն	17

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Բազրատաշեն, Դեղձավան, Դերեղավան և Պտղավան համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի հունվար ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեզրոյաների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքներ

Աշտարակ քաղաքից ոչ շատ հեռու, Երևան – Գյումրի ավտոճանապարհի վրա, իրար հարևանությամբ են գտնվում Աղձք, Ագարակ, Ուջան և Ոսկեվազ համայնքները: Երկար տարիների ընթացքում ապրելով իրար հարևանությամբ այս համայնքները պահպանեով իրենց առանձնահատկությունները ձեռք են բերել գործնական և բարեկամական բազմաթիվ հարաբերություններ, սերտաճած տնտեսություններ:

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է՝ հատկապես այգեգործությունն ու դաշտավարությունը: Սովետական միության տարիներին այս համայնքների տնտեսության հիմքում իր ուրույն տեղը ուներ խաղողագործությունը, որը սակայն գնալով անկում ապրեց՝ իր տեղը զիջելով առավել եկամուտ ապահովող այգեգործությանը և դաշտավարությանը:

Ո ս կ ե վ ա գ

Ոսկեվազը գտնվում է Աշտարակ քաղաքից 4 կմ հարավ-արեւմուտք՝ ծովի մակարդակից 1040 կմ բարձրության վրա: Ունի մոտ 4200 բնակիչ: Նախկինում ունեցել է Կրզըլ-Թամիր, Կուզիլթամիր, Ղզլթամուր անվանումները: Գյուղի շրջակայքում կան մի շարք հուշարձաններ՝ ս. Հովհաննես եկեղեցին, Աղթամար հնագույն ամրոցի ավերակները: Հանրապետության հիմնական էլակի մատակարարն է: Առկա 300 հեկտար վարելահողերից 130 հեկտար տարածքում աճեցվում է էլակ: Ոսկովազում առկա է մոտ 650 հեկտար պտղատու այգի (ներառած տնամերձերը):

Ու ջ ա ն

Ուջանը գտնվում է Աշտարակ քաղաքից 13 կմ արեւմուտք, ունի մոտ 3000 բնակիչ: Նախկինում հայտնի է եղել Վժան անունով: Գյուղի մոտ հայտնաբերված է արձանագրություն, որտեղ նշված է, որ գյուղի անվանումը պայմանավորված է լեռներից սրընթաց վժացող առվակի հետ: Ըստ պատմական որոշ աղբյուրների 895 թ-ին այստեղ իր բանակով կանգ է առել Սմբատ I Բագրատունի թագավորը, որը ճակատամարտել է արաբ ոստիկանի հետ եւ հաղթանակ տարել: Ուջան գյուղում է կառուցվել հայ ժողովրդի ազգային հերոս գորավար Անդրանիկի Հայաստանում առաջին հուշարձանը: Բնակչության մեծ մասը գաղթել է Արեւմտյան Հայաստանից՝ Սասունից եւ այլ բնակավայրերից: Համայնքում առկա 400 հեկտար վարելահողերը

գրեթե ամբողջությամբ մշակվում են: Բնակչության հիմնական զբաղմունքը պտղաբուծությունն է, խաղողագործությունը, ծխախոտագործությունը, բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակումը:

Ա գ ա ր ա կ

Ագարակը գտնվում է Աշտարակ քաղաքից 6 կմ արեւմուտք, Երեւան-Գյումրի ավտոխճուղու վրա: Ունի ունի մոտ 2000 բնակիչ: Հիշատակվում է միջին դարերից որպես Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի բնակավայրերից մեկը: Պահպանվել են Սուրբ Աստվածածին եկեղեցու ավերակները՝ կառուցված 7-րդ դարում: Հետաքրքրություն են ներկայացնում գյուղից արեւելք գտնվող մինչ օրս նշմարվող մեծ-մեծ քարերով շարված քաղաքային շինվածքների հետքերը: Գյուղի բնակչությունը 1915-1916թթ Վանից, Գավաշից, Բիթլիսից գաղթածներն են: Զբաղվում են խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, դաշտավարությամբ: Մշակում են բանջարաբուստանային կուլտուրաներ: Վարելահողերը կազմում են 159 հեկտար, արոտավայրերը՝ մոտ 46 հեկտար: Զարգացած է նաև կաթնամսատու անասնապահությունը: Այստեղ է գտնվում՝ Աշտարակ կաթ՝ ձեռնարկությունը:

Ա դ ձ ֆ

Աղձքը գտնվում է Աշտարակ քաղաքից 7-8 կմ հյուսիս-արեւմուտք: Ունի մոտ 2000 բնակիչ: Նախկինում ունեցել է Ախս, Ախց, Ախցից ավան, Խաղս անվանումները: Աղց անվանումով հիշատակվում է որպես Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի գյուղաքաղաքներից: Աղձք է վերանվանվել 1991 թ-ին: Գյուղում պահպանվել են զանազան հնություններ եւ հուշարձաններ, քարայրներ, հնագույն շրջանի բերդի հետքեր, 4-րդ դարում կառուցված եկեղեցու մնացորդներ, Արշակունի թագավորի դամբարանը: Զբաղվում են ծխախոտագործությամբ, դաշտավարությամբ: Մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաներ: Մրգատու այգիների տարածքը կազմում է մոտ 100 հեկտար, իսկ վարելահողերը՝ 190 հեկտար:

Համայնքների մրցակցային առավելությունները

Ստորև ներկայացված են համայնքների տնտեսությունների մրցակցային առավելությունները, որոնց հիմքում է ընկած համայնքների տնտեսության ուժը՝ համեմատած ինչպես հարևան, այնպես էլ ՀՀ այլ մարզերի համայնքների հետ:

Այս համայնքները հանրապետության այն փոքր քանակությամբ համայնքներից են, որտեղ տնտեսության մրցակցային առավելությունները հիմնականում վերաբերվում են ոչ թե բնական ռեսուրսներին, դիրքին այլ վերաբերում են մարդկանց, հարաբերություններին և համագործակցության հնարավորություններին, ինչը ինքնին բավականին կարևոր մրցակցային առավելություն է հանդիսանում:

Նորամուծության և փոփոխության հակվածություն, համագործակցություն:

Չբավարարվելով ունեցած եկամտով, մարդիկ միշտ մտածում են եկամտի աճի, կատարված աշխատանքների ավտոմատացման, արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Մարդկանց այս գծով է պայմանավորված տնտեսության մեջ նոր, առավել արդյունավետ ոլորտների ներդրումը և ոչ արդյունավետ ճյուղերի աստիճանաբար փոքրացումը: Որպես օրինակ կարելի է բերել գյուղերում խաղողագործության ոլորտի նվազումը և եկամտաբեր մշակաբույսերի աճեցման ծավալների ավելացումը:

Հաջողված փորձի արագ կրկնօրինակման հակվածություն

Ոսկեվազում բնակչության 70 % -ը ներառված է ելակի աճեցման ոլորտում, որը իր եկամտաբերությամբ մոտ 10 անգամ գերազանցում է խաղողի աճեցմանը: Ելակի աճեցումը, ինչպես նաև աճեցման տեխնոլոգիաները արագ կրկնօրինակվում են, ինչը բերում է այս ոլորտի մրցունակության որակական աճին:

Երևան – Գյումրի ավտոխճուղու հարևանություն

Երևան, Աշտարակ և Գյումրի քաղաները իրար կապող ճանապարհի վրա գտնվելը ստեղծում է բավականին մեծ հնարավորություն ապրանքերի վաճառքի հետ կապված: Այստեղ ճանապարհին կարելի է տեսնել մոտ 30 փոքր տաղավարներ, որտեղ վաճառվում է գյուղերում ստեղծվող բարիքը՝ մրգեր, սննդամթերք, գինի և այլն:

Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա:

Ռազմավարական ճյուղեր

⇒ Ելակի արտադրություն

Ելակը ապահովում է բարձր եկատաբերություն, ինչի շնորհիվ ակտիվորեն տարածվում է համայնքներում: Ոսկեվազում այս պահին ելակ է մշակվում մոտ 135 հեկտար հողատարածքի վրա, մնացած համայնքները ևս սկսում են շատացնել ելակի հողատարածքները:

⇒ Այգեգործություն

Այգեգործությունը վերջին տարիներին բավականին մեծ թափ է ստացել: Աճեցնում են դեղձ, սալոր, ծիրան, խնձոր և այլն: Եղանակային պայմանները նպաստում են այս ոլորտի զարգացմանը:

⇒ Գյուղմթերքի հետագա վերամշակում

Սառնարանները, չորանոցները, մրգերից հյութերի և կիսաֆաբրիկատների ստացումը կարող է արմատական ազդեցություն ունենալ համայնքների տնտեսությունների հետագա զարգացման համար: Այս պահին գյուղերում մարդիկ սկսել են այս ոլորտի զարգացմանն ուղղված կոնկրետ գործողություններ կատարել:

Ելակի մշակում

Այս համայնքներում, որտեղ մեկ տնային տնտեսությանը բաժին է ընկնում մոտ 0.4 հեկտար հողատարածք, մշակվող բույսի եկամտաբերությունը և արդյունավետությունը առավել կարևոր է, և հենց սա է ելակի մշակման ծավալների մեծացման հիմնական պատճառը:

Չնայած ելակի աճեցմամբ զբաղվում են բոլոր չորս համայնքներում, սակայն այս ոլորտում առաջատարը միանշանակ Ոսկեվազն է, որտեղ ելակի աճեցման առաջին փորձը իրականացվել է 1970 –ականներին, իսկ այժմ ելակը այդ համայնքում ամենաշատ մշակվող մշակաբույսն է՝ մոտ 130 հեկտար:

Ելակը հիմնականում աճեցնում են բացօթյա տարածքներում: Բերքը հասունանում է մայիսի վերջին, երբ վաճառման միջին գինը մոտ 400 դրամ է մեկ կիլոգրամի համար: Այս սեզոնին Ոսկեվազը աշխատանքով է ապահովում մոտ 500 մարդու նաև այլ համայնքներից, ովքեր մասնակցում են բերքահավաքի գործընթացին: Բերքահավաքի ժամանակահատվածը մոտ 25 օր է: Ելակը հիմնականում վաճառում են վերավաճառողներին, ովքեր իրենց մեքենաներով գյուղերից հավաքում են բերքը: Վերավաճառողները մեծամասամբ տեղի բնակիչներն են, ովքեր հավաքում են բերքը և տեղափոխում Երևանյան շուկաներ:

Որպեսզի հնարավոր լինի ելակի հասունացումը ավելի վաղ ապահովել, բնակիչները կառուցում են ջերմատներ, որոնք հնարավորություն են տալիս բերք ունենալ ապրիլ ամսին, երբ ելակի վաճառքի միջին գինը 700 – 800 դրամ է մեկ կիլոգրամի համար: Ջերմատները հիմնականում կառուցում են տնամերձերում:

Ստորև ներկայացված է ելակի շահութաբերության հաշվարկը 0.1 հեկտարի հաշվարկով բացօթյա տարածքում:

Անվանում	Ծախս	Մեկնաբանություն
Սաճիլի գնում	3 000 000 դրամ Մեկ տարվա համար – 300 000 դրամ:	Սաճիլը հնարավոր է գնել 200 – 500 դրամով: Սովորաբար մարդիկ նոր սաճիլներ ստանում են իրենց ելակի դաշտերից և նման մեծ ծախս անելու անհրաժեշտություն չի առաջանում: Հնարավոր է մի քանի տարվա մեջ մեկ անգամ 100 – 200 նոր սորտի սաճիլի գնումը առավել արդյունավետ սորտի աճեցման համար: Ընդհանուր առմամբ այս ծախսը կարելի է համարել ամորտիզացիոն ծախս, որը կծառայի մոտ 10 տարի:
Վար	15 000 դրամ	

Սածիլում	30 000 դրամ	Ենթադրվում է, որ աշխատանքներին մասնակցում են նաև հողագործի ընտանիքի անդամները: Հակառակ դեպքում սածիլման ծախսը կկազմի մոտ 70 000 դրամ:
Քաղհան	20 000 դրամ	
Բուժանյութեր	20 000 դրամ	
Պարարտանյութ	10 000 դրամ	
Բերքահավաք	200 000 դրամ	
Այլ	100 000 դրամ	Ներառած չկանխատեսված ծախսեր, ջուր, հարկեր և այլն
Ընդամենը	695 000 դրամ	
Եկամուտ	400 դրամ x 3000 կգ = 1200 000 դրամ	
Շահույթ	505 000 դրամ	

Ստացվում է, որ եթե տնային տնտեսությունը միջինը ելակ աճեցնում է 0.4 հեկտար տարածքում, ապա ունի տարեկան մոտ 2 000 000 դրամ շահույթ:

Նախաձեռնություն 1. Համայնքներում նոր ջրագծերի կառուցման և եղած ցանցերի վերանորոգման աջակցություն:

1 հեկտար ելակի աճեցումը ստեղծում է մոտ 5 000 000 դրամ շահույթ, աշխատանքով է ապահովում մոտ 10 մարդու: Լրացուցիչ 50 հեկտար ելակի աճեցումը թույլ կտա ստեղծել ավելի քան 250 000 000 դրամ շահույթ, սեզոնային աշխատանքով ապահովել 500 մարդու, ինչը էական ազդեցություն կունենա գյուղերի տնտեսական աճի և բնակիչների կենսամակարդակի բարձրացման համար:

Ստորև ներկայացված է էլակի շահութաբերության հաշվարկը 0.1 հեկտարի հաշվարկով ջերմաստնեքում տարածքում:

Անվանում	Ծախս
Հիմնական ծախսեր	695 000 դրամ
Ջերմաստան ամորտիզացիոն ծախս	600 000 դրամ
Ընդամենը ծախս	1 395 000 դրամ
Եկամուտ	700 դրամ x 3000 կգ = 2 100 000 դրամ
Շահույթ	805 000 դրամ

Ջերմաստնեքում էլակի աճեցումը 1000 մետրի հաշվով ապահովում է 300 000 դրամով ավելի շահույթ (+60 %) քան բացօթյա աճեցման դեպքում:


**Նախաձեռնություն 3.
Ելակի նոր սորտերի
ներկրման
աջակցություն:**

**Նախաձեռնություն 2.
Տնամերձեքում էլակի և
բանջարեղենի
աճեցման ջերմոցների
հիմնման
աջակցություն:**

Այ գ ե գ ո թ ը ո լ թ յ ո լ ն

Գյուղերում ավանդական աճեցվող խաղողը աստիճանաբար զիջում է իր դիրքը նորաստեղծ մրգատու այգիներին: Այս գործընթացը պայմանավորված է այգեգործության համեմատաբար բարձր եկամտաբերությամբ՝ համեմատած խաղողագործության հետ ինչպես նաև պահանաջարկի մեծությամբ:

Ստորև ներկայացված է նորաստեղծ այգիների բաշխվածությունը՝ ըստ մրգերի տեսակների.




Համայնքներում որևէ մրգի ընդգծված աճեցում չկա: Գրեթե հավասարաչափ աճեցնում են դեղձ, սալոր, ծիրան, կեռաս, խնձոր և այլն: Անկախ մրգի տեսակից, վաճառքի սխեման նույն է՝ ստացվող բերքի մոտ 30 - 40 % -ը, որը որակական հատկանիշներով ամենաբարձր որակի բերքն է, տեղում հավաքում են խոշոր վերավաճառողները: Մոտ 30 % -ը վաճառվում է համեմատաբար փոքր վերավաճառողների, անհատական հաճախորդների: Բերքի 20 - 30 % -ը հիմնականում չի վաճառվում: Այս օգտագործվում է որպես անասնակեր, տնական օդու արտադրության համար, կամ ուղակի չի հավաքվում այգիներից:

Այգեգործության հիմնական ցուցանիշները


Պտղի անվանումը	Դեղձ	Խնձոր	Ծիրան	Մալոր
1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	25 000	25 000	20 000	22 000
Վաճառվող բերքի քանակը	20 000	20 000	18 000	19 000
1 կգ-ի միջին մեծածախ գինը (2015թ)	180	150	170	160
1 հա-ից ստացված եկամուտը ('2'x'3')	3 600 000	3 000 000	3 060 000	3 040 000
Կատարված ուղղակի ծախսերը	950 000	600 000	730 000	610 000
Շահույթ	2 650 000	2 400 000	2 330 000	2 430 000

Բոլոր մրգերը ապահովում են գրեթե նույն շահույթը, որը մեկ հեկտարի հաշվարկով կազմում է միջինը 2 500 000 դրամ: Այս ցուցանիշները բավականին տատանվում են կապված բերքի քանակից, շուկայի վիճակից: Գինը հիմնականում շուկայում կարգավորվում է խոշոր վերավաճառողների կողմից և գյուղացիների կողմից գրեթե անհնար է կանխատեսել թե ստացվելիք բերքի քանակը և թե հնարավոր վաճառքի գները:

Մրգերի գների և պահանջարկի վրա բացասական է ազդում նաև մրգերի հասունացման ժամանակահատվածը: Ստացվող բերքի մեծ մասը համընկնում է այլ մարզերում նույն բերքի ստացման ամենաբարձր բերքատվություն ունեցող ժամանակահատվածին, ինչի արդյունքում շուկայում վաճառվում է հնարավոր ամենացածր գնով:



«Այգեգործություն – պտղի շարունակական վերամշակում» արժեզրթան համայնքներում




Բերքի մոտ 1/3 –ը օգատգործվում է որպես անասնակեր կամ օղու հումք, հաճախ նույնիսկ չի հավաքվում, քանի որ բավականին դժվար է իրականացնել միջին և ցածր որակ ունեցող մրգի վաճառքը: Չկան վերամշակող ձեռնարկություններ և նման մեծ քանակությունը հնարավոր չէ հասցնել վաճառել մանրածախ՝ հարևանների, բարեկամների և ծանոթների միջոցով:

Այգեգործության հետագա զարգացումը և արդյունավետության բարձրացումը ուղղակիորեն կապված է մրգի վերամշակող փոքր արտադրությունների ստեղծման հետ: Այս գյուղերում տարեկան մինչև 2000 տոննա մրգի վերամշակման հնարավորություն կա, ինչը բավարար է 10 –ից ավել փոքր ձեռնարկությունների կայացման համար:

Նախաձեռնությունների այգեգործության ոլորտում

Նախաձեռնություններ ■



Աձեցման փուլ

1. Վաղահաս և ուշահաս սորտերի, տնկիների ներկրման աջակցություն:

Հաշվի առնելով, որ բերքը հասունանում է այն սեզոնին երբ շուկայում տվյալ մրգի գինը բավականին ցածր է, անհրաժեշտություն է առաջանում նոր սորտերի միջոցով բերքի հասունացումը հնարավորինս տեղափոխելու և դիվերսիֆիկացնելու:

2. Գյուղ տեխնիկայի թարմացման աջակցություն

Ոչ միայն այգեգործության այլ նաև դաշտավարության մեջ էական է ունեցած մաշված գյուղտեխնիկայի (տրակտորներ, սրակիչներ, հնձիչներ և այլն) թարմացման ուղղությամբ, որոնք թույլ կտան նվազեցնել ստացվող բերքի ինքնարժեքը ինչպես նաև խնայել մշակման վրա ծախսվող ժամանակահատվածը:

3. Թունաքիմիկատների և դեղանյութերի ձեռք բերման աջակցություն

Գյուղերում անհրաժեշտություն կա որակյալ թունաքիմիկատների և դեղանյութների ձեռք բերման աջակցման, ինչպես նաև մասնագիտական խորհրդատվության մասով:

4. Ոռոգման ցանցերի բարելավման և կառուցման աջակցություն:

Եղած ցանցերի վերանորոգումը, ինչպես նաև նոր ցանցերի կառուցումը թույլ կտա էականորեն շատացնել մրգատու այգիների քանակը գյուղերում, նվազեցնել ջրի կորուստը, ռացիոնալ վերաբաշխել օգտագործվող ջուրը:

Վերամշակման փուլ

1. Սառնարանների կառուցման աջակցություն

Սառնարանների հիմնումը համայնքներում թույլ կտա բերքի որակյալ մասը պահպանել և վաճառել ավելի ուշ՝ աշնան և ձմռան ընթացքում: Վերջին տարվա ընթացքում համայնքներում սկսել են կառուցել անհատական սառնարաններ: Այս պահին համայնքներում անհրաժեշտություն կա մինչև 2000 տոննա մրգի սառեցման:

2. Չորանոցների կառուցման աջակցություն

Հատկապես բերքառատ տարիներին խնդիր է առաջանում իրացման հետ կապված և բավականին մեծ քանակությամբ որակյալ միրգ է փոջանում՝ վերածվելով անասնակերի կամ օդու հումքի:

Համայնքներում չորանոցների կառուցումը թույլ կտա էականորեն նվազեցնել բերքի կորուստը՝ որակյալ մրգից պատրաստելով չիր, որը ունի մեծ պահանջարկ ինչպես Հայաստանում, այնպե էլ արտերկրում:

3. Պահածոների և հյութերի արտադրության աջակցում:

Եթե չորանոցների դեպքում, որպես հումք պետք է օգտագործել որակյալ միրգը, ապա հյութերի և պահածոների արտադրության մեջ հնարավոր է օգտագործել նաև համեմատաբար ցածր որակ ունեցող միրգը, ինչը իրացումը շուկայում գրեթե անհնարին է: Նման արտադրամասերի կառուցման աջակցությունը թույլ կտա էականորեն օգտագործել փչացող միրգը բարձր արժեք ունեցող արտադրանքների արտադրման համար:

Այլ նյութեր

Խաղողագործություն

Չնայած խաղողագործության ավանդույթը այս համայնքներում բավականին հին է, այժմ բնակիչները թերահավատորեն են խոսում այս ոլորտի հետագայի մասին: Այգիները արդեն բավականին ծերացել են, ինչի արդյունքում նվազել է թե բերքի քանակը և թե որակը:

Նոր այգիներ չեն հիմնվում ինչը ուղղակիորեն կապված է վաճառքի բարդությունների, մեծ աշխատատարության և համեմատաբար ցածր եկամտաբերության հետ:

Ստորև ներկայացված է մեկ հեկտար խաղողի մշակումից ստացվող շահույթը՝

1 հա-ից ստացվող միջին բերք	12 տ
Վաճառքի միջին գին	120 դրամ
Եկամուտ	1440 000
Արտադրական միջին ծախսեր	700 000
Շահույթ	744 000

Համեմատության համար նշենք, որ այգեգործության մեջ մեկ հեկտարի մշակման դեպքում միջին շահույթը կազմում է 2. 500.000 դրամ, իսկ ելակի դեպքում՝ մոտ 5.000.000 դրամ: Համայնքների բնակիչների խաղողագործության ապագան տեսնում են արտադրական սորտերի վերացման, և սեղանի սորտերի արտադրության մեջ, որի փորձերը համայնքներում արդեն արվում են:

Անասնապահություն

Անասնապահությունը ևս համեմատաբար թույլ է զարգացած համայնքներում: Հիմնականում կաթի ու մսի արտադրությունը տեղական և ընտանեկան սպառման համար է կատարվում: Համայնքներում առկա են 2600 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնցից մոտ 1350 –ը կովեր են:

Համայնքերը հիմնականում չունեն բավարար քանակությամբ խոտհարքեր, ինչի արդյունքում անասնապահությունը առավելապես հանդիսանում է տնտեսության օժանդակ ճյուղ, որտեղ ստեղծվում է կաթ և կաթնամթերք հիմնականում ներքին կարիքների բավարարման համար:

Կան նաև մոտ 20 ֆերմերներ, ովքեր պահում են մինչև 50 գլուխ անասուն: Այս ֆերմերները կաթը հիմնականում հանձնում են նույն տարածաշրջանում գտնվող «Աշտարակ կաթ» ձեռնարկությանը:

Անասնապահությունը արտադրողականությամբ հետևաբար նաև շահութաբերությամբ զգալիորեն զիջում է այգեգործությանը: Ստորև ներկայացված է անասնապահության հիմնական ճյուղերի համար արտադրողականության հաշվարկը:

1	Անվանումը	Խոզ	Կով	Բովոզ հորթեր	Ոչխար
2	Քանակ	20 հատ երկու ամսական գոճի	10 կով	10 հորթ	50 ոչխար
3	Ստացվող արդյունքը միավորից	40 կգ միս յուրաքանչյուր վեց ամսական խոզից	2 000 լիտր կաթ 1 հորթ	200 կգ միս երկու տարում	1 գառ
4	Ընդհանուր արդյունքը	600 կգ միս	20 000 լ կաթ 10 հորթ	2000 ն կգ միս	100 գառ
5	Մեկ միավորի մեծածախ գինը	2500 դրամ մեկ կիլոգրամ խոզի միսը	130 դրամ մեկ լիտր կաթը 60 000 դրամ մեկ հորթը	2000 դրամ մեկ կիլոգրամ միսը	1 գառը 40000
6	ստացվող եկամուտը ('4'x'5')	1 500 000	3 200 000	4 000 000	2 000 000
7	անհրաժեշտ նյութական ծախսերը	700 000	1 900 000	2 400 000	600 000
8	Շահույթ	800 000	1 300 000	1 600 000	1 400 000

Անասնապահության հետագա զարգացմանը կարող է օժանդակել տեղական կաթնամթերքի արտադրության փոքր արտադրամասի հիմնումը, որը կկենտրոնա առավել բարձրարժեք կաթնամթերքի արտադրության վրա, ինչ շնորհիվ կաթը կկարողանա մթերել համեմատաբար ավելի բարձր գնով:

Շնորհակալություն ենք հայտնում համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

